

**Նուպարեան գրադարան.
Սփիւռքի մէջ կազմուած Ի. դարու հաստատութիւն մը եւ իր դերը իբրեւ
հայկական պատմագրութեան կեդրոն:**

Պորիս Աճեմեան

Նուպարեան գրադարան

Նախ եւ առաջ շնորհակալութիւն կը յայտնեմ այս գիտաժողովի կազմակերպիչներուն: Ձեզի պիտի ներկայացնեմ Նուպարեան գրադարանին պատմութիւնը՝ անոր ստեղծումէն ի վեր: Ինչպէս որ դուք արդէն գիտեք, Նուպարեան գրադարանը Ֆրանսայի մէջ գտնուող գլխաւոր հայկական գրադարանն է: Ան, Վենետիկի, Վիեննայի եւ Երուսաղեմի գրադարաններուն հետ, կարելոր տեղ մը կը գրաւէ Եւրոբայի մէջ եւ ընդհանրապէս Սփիւռքի տարածքին, որոնք մասնագիտացած են հայագիտական զանազան նիւթերու, հայկական պատմութեան եւ մշակույթին: Հակարակ Վենետիկի եւ Երուսաղեմի գրադարաններուն՝ որոնք նշանաւոր են իրենց միջնադարեան ձեռագիրներու հավաքածոներով, Նուպարեան գրադարանի ուսումնասիրութեան նիւթերը, հարստութիւնը հատկապէս կը վերաբերի արդիական ժամանակի այսինքն տասնիներորդ ու քսաններորդ դարերուն տպուած գիրքերու եւ նոյն դարաշրջանին լոյս տեսնող մամուլին: Պետք է նշենք որ Նուպարեան գրադարանը կը պատգանի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ կը մատակարարուի նոյն միութեան կողմէ: Ուրեմն, այս դասախոսութեան ընդացքին, պիտի ներկայացնեմ Նուպարեան գրադարանի զանազան հաւաքածոները : Յաջորդաբար, պիտի բացատրեմ այս հաստատութեան դերը իբր հայկական պատմագրութեան կեդրոն, յատկապէս ինչ որ կը վերաբերի ցեղասպանութեան հարցին: Այս եզակի երեւոյթը ուղղակի կապուած է գրադարանի պատմութեան, անոր հիմնադրին ցանկութեան եւ անոր առաջին տնօրէնի անցեալին որ եղեռնի վերապրող մը եղած է 1915 թուականին:

Առաջին կետը կը վերաբերի գրադարանի պատմությանը:

Պետք է յիշեցնենք որ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը հիմնուած է Գահիրէի մէջ 1906 թուականին, մարդասիրական նպատակներու համար:

Երբ անոր առաջին նախագահը, Պողոս Նուպար, կը դառնայ ազգային պատուիրակութեան պետը, Բարեգործականի Կեդրոնական վարչութեան գրասենեակը կը տեղափոխուի Փարիզ, Առաջին Աշխարհամարտի օրերուն: Կարճ ժամանակէ մը ետք, Նուպար Փաշայի կողմէ կարուցուած է Ալպոնիի փողոցի շէնքը՝ Փարիզի տասնըվեցերորդ թաղամասը՝ ուր գրադարանն ալ կը հաստատուէր նոյն շէնքին մէջ եւ մինչեւ այսօր կը գտնուի նոյն տեղը:

Նուպարեան Գրադարանը ստեղծուած է 1928ին: Արամ Անտոնեան եղած է գրադարանին առաջին տնօրէնը եւ պաշտոնավարած մինչեւ իր կեանքի վերջը՝ 1952: Գրադարանին գիրգերու եւ վաւերաթուղթերու մեծ մասը հաւաքուած է Անտոնեանի ջանքերով:

Առաջին օրէն իսկ գրադարանը նկատուած էր հայկական եւ արեւելեան ուսումնասիրութիւններու կեդրոն: Ըստ Անտոնեանի, գրադարանը պետք էր դառնար ժողովի կեդրոն մը գաղթական մտավորականներու համար՝ հայ թէ օտար, որոնք կը սփռուէին Հայ ազգի հիմնական հոգերով, ոչ միայն ուսումնասիրութեան տեղ: Այդ թուականներուն, այդ օրերուն, միութեան ղեկավարներուն մտահոգութիւնը կեդրոնացած էր հայ գաղթականներու վիճակով Միջին Արեւելքի մէջ, նոյնպէս Բարեգործականին գործունէութիւնը ի նպաստ ազգային հաւաքատեղիի մը ստեղծման՝ Սովետական Հայաստանի մէջ:

Հստակ է որ հակարակ մտաւորական եւ ուսումնասիրութեան հիմնական կոչում ունենալուն, սկիզբէն ի վեր Նուպարեան գրադարանը նաեւ քաղաքական նպատակ ալ կը հետապնդէր: Հայկական պատմութեան վերաբրեալ նիւթեր հաւաքելով, գրադարանին պատասխանատուները հայական ազգային քաղաքական պահանջները պաշտպանել կը փորձէին:

Գրադարանը շուտով հաւաքեց մտաւորապէս քսան հազար տպուած գիրքեր (քարասուն երկու հազարէն աւելի է այսօր) քանի մը գրասէր ու պետական մարդոց վեհանձնութեան շնորհիւ, Նուպար Փաշա եւ Միքայէլ Փորթուքալեանի պէս: Հատկապէս հարուստ է Պոլիս եւ Վենետիկ հրատարկուած գիրքերով, մանաւանդ ասոնք որոնք տպուած էին տասնիններորդ դարուն եւ քսաներորդ դարուան սկիզբը: Մանաւանդ գրադարանին հարստութիւնը մաս կը կազմեն զանազան կարեւոր արխիւներ:

Սկիզբէն ի վեր, գրադարանը՝ հայկական եւ արեւելեան հարցերուն վերաբերեալ արխիւներ կազմել փորձեց, հաւաքելով Պոդոս Նուպարի կողմէ ղեկավարուած ազգային պատուիրակութեան թղթակցութիւններն եւ զանազան նիւթերը: Նկատի ունենալով այն ատենին համաշխարհային վիճակն ու պայմանները, գրադարանին նպատակը ոչ միայն կրթական եւ մշակութային կը դառնար, այլ նաեւ հայ ժողովուրդի քաղաքական պահանջները նկատի կ'ունենար: Անոր առաքելութիւնն էր ազգային յիշողութիւնը պահել: Այս յատուկ վիճակը կը բացատրէ որ Նուպարեան գրադարանը, միայն գիրքեր թերթեր չպահէր, այլ նաեւ արխիւներ, լուսանկարներ եւ զանազան նիւթեր :

Այժմ կ'անցնիմ գրադարանին հաւաքածոները ներկայացնելու և ընդգծելու ամէն մէկուն ներկայացուցած արժէքը, որոնք ցեղասպանութեան ուսումնասիրութեան համար կարեւոր ակեր են:

Կրկին պէտք է ընդգծեմ Արամ Անտոնեանի գործունէութեան կարեւորութիւնը Նուպարեան գրադարանին ստեղծման մէջ եւ ի նպաստ ցեղասպանութեան պատմագրութեան: Նախկին Պոլսահայ լրագրող, Ապրիլ 24ի աքսորէն հրաշքով վերապրող, Փարիզ հաստատուած, Անտոնեան , իր կեանքին վերջին երեսուն տարիները նուիրած է ցեղասպանութեան նիւթերու հետազոտութեան: Բազմաթիւ վկայութիւններ հաւաքած է՝ ***Նիւթեր տեղահանութեան եւ կոտորածներու պատմութեան համար*** խորագրին տակ:

Անտոնեանի հաւաքածոյին կարեւոր մասը կազմուած է վաթսուներկու ծրարներ՝ 1915ի դէպքերու վերաբերեալ, որոնք դասաւորուած են զանազան գաւառներու

անուան տակ: Այս ծրարները կը պարունակեն բազմաթիւ ձեռագիր պատմուածքներ և վկայութիւններ, անձնական թղթակցութիւններ ևայլն: Այս մեծարժէք հաւաքածոն կը պարունակէ նաեւ յատուկ ծրարներ որոնք նուիրուած են գլխաւոր իթթիհատական ոճրագործներուն, նկարագրելով իրենց կատարած գործունէութիւնները պատերազմին ընթացքին և պատերազմէն յետոյ: Պէտք է աւելցնել նաեւ բազմաթիւ թերթերէն քաղուած յօդուածներ, Անտոնեանի կողմէ հաւաքուած: Այս նիւթերու կարելոր մասը ուսումնասիրուած է Ռեմոն Յարութիւն Գէորգեանի կողմէ, երկար տարիներ հետազօտական աշխատանքներով հեղինակած է կարելոր գործ մը ցեղասպանութեան պատմութեան նուիրուած, բացառիկ գործ մը որ ցոյց կու տայ Նուպարեան գրադարանի հաւաքածոներուն պատմական արժէքը: Հետեւաբար, կրնանք բաղդատել Անտոնեանի գործունէութիւնն ու ջանքերը որոնք կատարուած էին նոյն ատենին հրեայ լրագրող ու պատմաբան Էլիաս Չերիքովըրի կողմէ, պատերազմէն ետք նիւթեր հաւաքելով ոճրագործներու դատավարութիւնները պատրաստելու հեռանկարով: Անտոնեանին պէս, Չերիքովըր հաւաքեց բազմաթիւ վկայութիւններ հակահրեական կոտորածներէն յետոյ, որոնք տեղի ունեցած էին Ուքրանիոյ մէջ 1915էն սկսեալ: Անտոնեանի նման, ան ստեղծեց պատմագրութեան կեդրոն մը Նիու Եորքի մէջ (Միացեալ Նահանգներ):

Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի արխիւները կը կազմեն Նուպարեան գրադարանի հաւաքածոներու երկրորդ կարելոր մասը: Քէմալական յաղթանակէն քիչ ժամանակ առաջ, այս արխիւները դրկուած էին Անգլիա եւ յաջորդաբար Ֆրանսա՝ ուր Գրիգորիս Պալաքեան նոր թեմ մը հիմնած էր Մարսիլիա: Անկէ ետք, արխիւները դրկուեցան Փարիզ ուր Նուպարեան գրադարանը նոր բացուած էր: 1938ին, այս արխիւներէն ցեղասպանութեան վերաբերեալ նիւթերը դրկուած են Երուսաղէմ: Մնացածը պահուած է Փարիզ: Այս հաւաքածոն կը պարունակէ հայոց պատրիարքարաններու թղթակցութիւնները գաւառներու հետ՝ տասնիւններորդ դարէն սկսեալ մինչեւ քսաներորդ դարու սկիզբը Օսմանեան կայսրութեան իշխանութեան շրջանին: Պէտք է շեշտենք յատկապէս Պատրիարքարանի պատրաստած մարդահամարի կարելորութիւնը Օսմանեան Կայսրութեան

օրերուն: Այս ցանկերը կ'ապացուցանեն և կը հաստատեն հայ բնակչութեան թիւը, անոր կղերական եւ կրթական հաստատութիւններու գոյութիւնը, որոնք պատրաստուածէին առաջին համաշխարհային պատերազմէն երկու տարի առաջ:

Ան ինչ կը վերաբերի Պոլսոյ, պէտք է շեշտել նաեւ Նուպարեան գրադարանի պոլսահայ մամուլի հաւաքածոններու կարեւորութիւնը: Բազմաթիւ վերնագիրներ, օրինակի համար *Շամանակ*, *Նոր Կեանք*, *Վերջին Լուր*, *Վերածնունդ* պահուած են գրադարանին կողմէ, կամ այլ ֆրանսախօս եւ Պոլիս տպուած թերթը *La Renaissance* պատերազմէն ետք: Բոլոր այս թերթերը հազարներով եւ անգին տեղեկութիւն կը բերեն Պոլսոյ այդ ատենին քաղաքական վիճակի մասին, օրինակի համար իթթիհատկաններու դատավարութիւններու վերաբերեալ, կամ այլ պոլսահայ եւ հայ գաւառներու ընկերային եւ մշակութային կեանքի մասին: Այս բոլոր թերթերը յաճախ հազուագիւտ են եւ նոյնիսկ Պոլսոյ մէջ դժուար է գտնոնք գտնել: Այս պատճառով, յաճախ Թուրք ընթերցողներն ալ կ'այցելեն Նուպարեան գրադարանը, այս նիւթերը ուսումնասիրելու համար :

Խօսքս աւարտելէ առաջ, կուգեմ ստորագծել Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան զանազան արխիւներուն եւ հաւաքածոններուն մասին: Նկատի առնելով իր դերը 1920նէն ի վեր, ի նպաստ հայ գաղթականներուն եւ տեղահանութեան վերապրողներուն, Բարեգործականի արխիւները թոյլ կու տան քննարկելու ցեղասպանութեան հետեւանքները, մարդկային եւ ընկերային հարցերու շուրջ, Միջին Արեւելքի եւ հայկական սփիւռքի մէջ: Այս հաւաքածոները կը պարունակեն Բարեգործականի կեդրոնական վարչութեան թղթակցութիւնները, հրատարակութիւնները, այլ նաեւ տաս հազար լուսանկարներ որոնք ցոյց կու տան Միջին Արեւելքի որբանոցներու կացութիւնը եւ գաղթականներու կեանքը:

Եզրակացնելու համար, հարց կու տամ Նուպարեան գրադարանին դերը և կարեւորութիւնը գաւառներէն դարձող սփիւռքի կեանքի մէջ ուր հայերէն լեզուի գործածութեան դաշտը կը նուազի եւ այս երեւոյթը հայկական մշակութային զարգացման վրայ կ'ազդէ: Հետեւաբար կարժէ ընդգծել որ Նուպարեան գրադարանը եզակի հաստատութիւն մըն է սփիւռքի մէջ: Նիւթերու իր

զանազանությամբ կը տարբերի: Այժմ հետազոտութեան այս կեդրոնը կը յաճախեն Ֆրանսացի, Իտալացի, Գերմանացի, Անգլիացի, Ամերիկացի, Լիբանանցի, Թուրք եւ Հայ հետազօտներ: Պատմաբաններ՝ մասնագէտներ՝ որոնք կը հետաքրքրուին հայ պատմութեամբ կամ մշակոյթով, Ֆրանսայի թէ Եւրոպայի մէջ, լաւ կը ճանչնան այս պատմական գրադարանը: Կարծէ նշել որ այցելողներուն թիւը կը բարձրանայ ցեղասպանութեան հարիւրամեակին սեմին: Հեռատեսիլի եւ ձայնասփիւռի լրագրողներ, նոյնպէս պատմագրական ժապաւեններ պատրաստող արուեստագէտներ յաճախ կ'այցելեն գրադարանը ուր կը փնտռեն պատկերներ, լուսանկարներ, և պատմական տեղեկութիւններ: Այս ձեւով կրնանք եզրակացնել որ Նուպարեան գրադարանը՝ կարելոր տեղ մը կը գրաւէ , ֆրանսայի՝ եւ նաեւ սփիւռքի հայկական մշակութային կեանքին մէջ: